ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԻՋԱՄՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ. ՕՄԲՈՒԴՍՄԵՆ

11.10.2013 11:52

Երեկ փաստաբանները դիմել էին Մարդու իրավունքների պաշտպանին՝ դժգոհելով ՀՀ Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի կողմից մշակված օրենքի նախագծից, ըստ որի նրանց վրա դրվում է հավելյալ տուրքի վճարման պարտավորություն: Նույն օրենքի նախագիծը Պաշտպանին կարծիքի էր ուղարկվել նաև ՀՀ Արդարադատության նախարարության կողմից:Ուսումնասիրելով օրենքի նախագիծը՝ պաշտպանը պարզեց, որ առաջին հերթին խնդրահարույց է այն, որ Արդարադատության նախարարությունը միջամտում է փաստաբանների անկախ գործունեությանը՝ իր վրա վերցնելով փաստաբանների գրանցամատյանի վարման գործառույթը, ինչի համար նաև գանձում է հավելյալ տուրք:

Բացի այդ, ընդունելի չէ այն հիմնավորումը, որ փաստաբաններից գանձվող տուրքը նախատեսվում է ուղղել Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանմանը, քանի որ այդ գրասենյակի պահպանումը հանդիսանում է պետության պոզիտիվ պարտականությունը:

Ուստի ելնելով վերոգրյալից' Պաշտպանը առաջարկել է նախարարին վերանայել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և պատշաճ կերպով շահագրգիռ անձանց հետ քննարկելուց հետո միայն դնել համապատասխան շրջանառության մեջ՝ հաշվի առնելով մեր կողմից նշված դիտողությունները:

Աղբյուրը՝
http://ombuds.am/library/view_news/article/1093

Նախորդ նորությունը: ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ «ՍՊԱՌՆՈՒՄ» Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ ՉԿԱՆՉԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Հաջորդ նորությունը: ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԿԻՍՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ. ՄԱՐՈՒՔՅԱՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ՝ ՆԱԽԱԳԻԾԸ ԱԺ ՉԻ ՀԱՍՆԻ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

24.10.2013
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })